



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎԱԿԱՆ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՅԼՆ

ԲԱՃՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 33րդ տարեշրջանի (1917 օգոստոս-1918 յուլիս բաժնորգազինն է 20 ֆրանկ. Թիւրքիաի և Պարսկաստանի համար 10 ֆրանկ, ԿԱՆԻՍԻԿ: Ամսական բաժնորգազինն է 2 ֆրանկ. Թիւրքիաի և Պարսկաստանի համար 1 ֆրանկ. Կամակ կամ զրամ զրկել Մ. PORTOUKALIAN

Directeur du journal Armenia MARSEILLE (France)

ԼԳՏԱՐԻ

Թիւ 2

1917 ՕԳՈՍՏՈՍ 8 ԴՆ.

(. S. 1917 Յուլիս 26)

ՊՍՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, հաստատելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերագարձունել շհրատարակուած ձեռագիրները:

Մանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Մանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. ի գիրագիրը 2 սանդիմ:

Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction: Place Alexandre-Labadie, 17

ԲԱՃՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ  
"ԱՐՄԻՆԻԱ" ԼԳՏԱՐԻ ԵՒ ՈՅԼՆ

(1917 ՕԳՈՍՏՈՍ — 1918 ՅՈՒԼԻՍ)

Ամբողջ 33րդ տարեշրջանի (1917 օգոստոս-1918 յուլիս) բաժնորգազինն է 20 ֆրանկ:

Կարելի է նոյն հաշուով բաժնորգագրուել նաեւ 6 ամսի (10 ֆր.) եւ 3 ամսի (5 ֆր.) համար:

ՄԱՐՍԵՅԻ ԿՍՄ ՖՐԱՆՍՍԻ ԲՆՍԱՊՂ  
ԲԱՃՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԷՆ

Արմենիայի բաժնորգագրուելը դիւրացնելու համար, Արմենիայի իրենց կը զրկուենք 6 ամսի համար 5 ֆր. կամ 3 ամսի համար 2 1/2 ֆր. բաժնորգազնով որպէս զի կարեւորան իրենց հայազգային կեանքի վրայ, տեղեկութիւններ եւ լուրեր ունենայ, իրենք ալ ոգեւորուել Հայաստանի յոյգերով եւ յոյսերով եւ իրենց դատողութիւնը զարգացնել Հայ ազգի իսկական վիճակին եւ անոր պէտքերին նկատմամբ:

Ճրանաստեղծութիւններ եւ գործաւորներ, փութացէ՛ք օգտուել մեզ ընծայուած այս դիւրութիւնին:

ՓԱՐԻԶԱՆՍՅ ՏՄԵՆՈՅՑ

Պատկերազարդ  
1917

Չնայելով որ տարիին կէսը անցած է արդէն, այս պատկերազարդ ՏՄԵՆՈՅՑՑԸ միշտ կը փնտռուի եւ հետաքրքրութեամբ կը կարդացուի ամէնքէն որովհետեւ բաց ի ՕՐԱՅՈՅՑՅԷՆ, որ անոր մէկ փոքր մասը կը կազմէ, կը պարունակէ նաեւ հայրենասիրական ոգեւորիչ գրուածներ, բանաստեղծական ընտիր հատուածներ եւ զանազան կենսագրական հետաքրքրաշարժ տեղեկութիւններ:

Գնեցէ՛ք մէկ օրինակ. առով ոչ միայն մեր օրերը եւ եկեղեցական տօները պիտի գիտնաք, այլ եւ ընծիր անուշամտութեամբ կարեւորանալու մը պիտի անցունէք ու հեղինակն այ պիտի բացապերէք ուրիշ տարիներ աւելի յաջ պատրաստելու:

Մարտի 1 մէկ կարելի է ստանալ Արմենիայի գրասենեակէն 2 ֆր. եւ 20 սանդիմով: Մարտի 15 դուրս կը զրկուի 2 ֆր. եւ 40 սանդիմով:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Ազգային Միութեան Մարտի 1 Մասնահիւղէն. — Թիւրքախաղ համազումարը երեւանի մէջ. — Վերադարձ ինքնաշարժի. — Բերքիւնի յայտարարութիւնը Հայաստանի մասին. — Կովկաս ապստամբութեան փախտականների թիւը. — Նամակ Հնդկաստանէն (Ռանգուն). — Տեղական. — Արեւիկայի կամուրներ Սարգիսի համար. — Ճափոն եւ Արեւիկայի Միացեալ Նահանգներ. — Յունաստան. — Ռուսիա. — Պատերազմական լուրեր. — Նոր ստացուած հրատարակութիւններ. — Մանուցումներ:

ՀԱՅ Ա.ՉԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՄԱՐՏԻ 1-Ի ՄԱՍՆԱԿՆԵՐԷՆ

Մարտի 1, 28 յուլիս 1917  
Հայրենակիցներ,

Հայ Ազգային Միութիւնը իր թեւերը տարածեց բոլոր հայ գաղութներու վրայ և երկար առեւտրի վերանշրջանի և հրամայական եղող համերաշխութիւնը արդէն իսկ կատարուած իրողութիւն մ'է այսօր, որուն առջև կը խնայարձի ու կը զգացարձի բոլոր հայ սրտերը:

Մարտի 1 բացառութիւն մը չպիտի կազմէր ի հարկէ և արդէն իսկ բազմաթիւ ունեցանք կազմակերպուած Ազգային Միութեան յայտարարութիւնը ապու այս սինակներու մէջ իսկ. Բայց պէտք է ըմբռնել թէ ազգային միութիւնը չը հիմնադրուի իր լոկ խօսքերու և գիրքերու վրայ. ան կը պարտադրէ գործնական այնպիսի փայլեր սրնք պէտք է լրացնեն առաջադրուած ազգային նպատակները և ահա՛ հոս է ազգային միութեան իմաստն ու ոգին:

Ամերիկահայ, Եգիպտահայ և ուրիշ սեպերու գաղութները իրենց համերաշխական զգացողութիւնը ցոյց տալին այնպիսի անձնուէր և միահամուռ շարժումով մը որու զիմաց անշարժ և լուս կրատարական զիրք մը պիտի հաւասարէր սօճիքի, մանաւանդ այս օրերուն երբ հայրենիքի ճակատագիրը բոլորովին իր վճռական շրջանին մէջ կը մտնէ:

Ուրեմն կը մնայ մեզ անվհաս

Նախքեր և զոհարերութեան անուշատի գործ զնել, մեզ ինկած բաժնի պատուարեր և յաջող կատարումին համար:

Արդ, բացառած կը համարինք ազգային հանգանակութիւնը որուն սակնու քանակը չափանիշը պիտի ըլլայ մեր զգացումներուն և պարտաճանաչութեան ոգին:

Խօսքերը չեն որ մեզ պէտք է յուզեն և յառաջ մղեն զէպի գործ. հայրենի կացութիւնը իր եղբրական բայց յուսադրող մեծութեամբ անձնուիրութեան և զոհարերութեան վստահութեամբ մը պէտք է դառնայ իւրաքանչիւրիս:

Հետեւաբար կը խնդրենք մեր մաստար թէ հեռուոր բոլոր հայ ըզգայուն սրտերէն որ իրենց առատաձեռնութեամբ օժանդակեն Միութեանս ձեռնարկին որ կենսական կապ մը ունի մեր ազգային նաւիրական դատին յաջող լուծման հետ:

Ստեղծագործ  
Յովհ. ՍԱՀԱՍՏՆԱՆ

Վ. Առեւակապի  
ԱՅՆ. ԹՈՐՈՍԵԱՆ

Գրամ ուղարկել Միութեան գանձապահի հասցէին՝

M. Tékéian  
6, rue d'Arcole MARSEILLE

Իսկ պաշտօնական բոլոր գրութիւններ ուղղել ստեղծագործի հասցէին՝

H. Sahatdjian  
1, Bd Louis Salvator MARSEILLE

Ա. ՏՈՒՑԱԿ  
ԱՉԳԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Սահմանեան եղբարք	1500
Միհրան Թէքեան	1500
Ոմն (Ա. Կ.)	1500
Գ. Շահաբեան	200
Մ. Տէր Բարսեղեան	50
Տ. Շապանեան	50
Արշակ Թորոսեան	50
Սարգիս Լօբսիզեան	1500
Արման Թիւրապեան	1500
Ս. Հ. Կիւմշեան	400
Յ. Ներսիսեան եւ ընկ.	300
	8550

Միւս էջէն	8550
Մարտիկ Միւսեան	20
Պօղոս Հապոյեան	10
Lanceyէն պր. Ա. Թորոսեանի ձեռամբ հանգանակուած.	
Նախօգէն Քէշիշեան	20
Գարիէլ Զարաբեան	20
Սուքիս Հապոյեան	25
Մարգար Սահակեան	20
Սողոմոն Տիւրքեան	20
Կարեգին Մէնտիլեան	20
Ղազար Քրիզոբորեան	20
Կարապետ Շապուրեան	36
Խաչատուր Մէնտիլեան	10
Պետրոս Իրէքեան	10
Տօնիկ Զարապեան	20
Հայ երիտասարդական միութիւն (Ղանաշի մասնաճիւղ)	20
Ոմն	10
Գումար	8831

ԹՈՒՐՈՍԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ  
ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

IV

Վերաշինութեան մասնախումբի կողմէ կը գեկուցէ Ար. Մանուկեան, յայտնելով որ Յանձնախումբը աւելի լայն կերպով մտտեցած է իր աշխատանքներուն, բաժնելով երկու մասերու՝ Ա. Վերաշինութիւն պատերազմի ընթացքին և Բ. Վերաշինութիւն պատերազմէն յետոյ. որու համար կընդունուի հետեւեալ բանաձև որոշումը:

1. Վերագարձել պատերազմի և այլ պատճառներով ցրուած հայութիւնը իր պատմական-քաղաքական սկիզբութեանց մասը հայրենիքը:

2. Վերաշինութիւնը համապատասխան լինի պահանջներուն և հնարաւորութեանց ըստ կարելոյն շուտ և արագ վերաշինակի զարմնելու հայ հայրենիքը:

3. Վարչական վերաշինութիւնը իր հեռու գրեթե աւելի լայն սեղ ապ սնանկական վերաշինութեան՝ հայ ժողովուրդին հնարաւորութիւն ապով որ նա կարենայ իր իսկ սեփական միջոցներով ապրելու, արդիւնաբերելու և ստեղծագործելու:

Ահա այն ընդհանուր հիմունքները, որոնց վրայ կառուցուած էր լայն ծրագիր մը, 15 կէտերէ բաղկացած ու զորոշող ի պատերազմի ընթացքումը երկրին մէջ, որ փախստականները վերագարձուին, անոնք ապահով վայրերու մէջ սեղաւորուին, անոնց իրաւունքները պատշաճաբար, սեղական միջոցաւ կազմակերպուի, զպրոց որոնցները կազմակերպուին, լծկան ու գիւղատնտեսական գործիքներ բաշխուին, նպաստի փութելն կիրառուի աշխատանքի սկզբունքը, լեւնարնակներուն արք:

էի ոչխար՝ արօտ-լծկանի փոխարէն, արհեստագործին գործիք գրամագրութեան արտի, պարենաւորութեան արտի, պատերազմի ու գերութեան ճանկերէն ազատագործը խնամուին և մեր խաղաղ գրողներէն հանդէպ չմտածանք միջոց չունենալու վերաբերմունք... ևն...

Իսկ Արօտի մէջ փոխադրուածներու գոյութիւնը ապահովելու համար՝ մինչ այն, կանոնաւոր կազմակերպիչ օգնութեան գործը, որտեղ ապրող գեղացիներ կամ արհեստագործը նոյնպէս միջոցներ ստանայ, աշխատանքի բերաններ կազմելու, մասնաւոր գործի սուղ կանոնը արհեստանոցներուն, գործը-որանոցները լաւագոյնս կազմակերպել՝ չմտածելով Ֆիզիքական աստղագիտական կրթութիւնը, ստեղծել մասնաւոր ֆոնդ մը քարտէրագին և մասնագիտական կրթութիւն ստուգելու արհեստագործներուն աստիճանը, ստեղծել ֆոնդ մը երկրի տնտեսը, խնամութիւնը շինելու, ստեղծել առ հասարակ այս բոլորի համար Ազգային մեծ ֆոնդ փոխառութիւն մը ևն... ևն...

Եւ այդի Բ. մասը կը վերաբերի պատերազմին յետոյ ձեւաւորելիք միջոցներուն...

1. Պատերազմութիւն տեսնել պատերազմին անմիջապէս յետոյ փոխադրուածները կրկին օգնութեան, միջոցներ ձեռք առնել որ Միջոցներու արտադրութիւնը, գերի գնացած Հայերէն վերագործները իրենց հարկերը, ինչպէս և Աւերիկայ, Բալկաններ, Կարգաւոր հաստատուած Հայերը և այլ թերի Արօտի ապաստանած թիւրքացիները, նոյնպէս և սուս կատարութեան աշխատութիւնը հրաւիրել որ, որքան հնարաւոր է, չուս վերացնել այն բոլոր ճիշդ պայմանները, զորս ստեղծած էր նախկին սէփիւր հարստիւն ու վարչական հասարակական ինքնիշխանութիւնը...

Այս բոլոր նպատակները իրագործելու համար՝ ստեղծել մեծ և զօրեղ կազմակերպութիւն մը, ևն...

2. Այս համագործակցութեան ստեղծուող կեդրոնական մարմինը վրայ պարտք կը դրուի վերաբնութեան նպատակով կազմուած համագործակցութեան նպատակներու մէջ ու վերաբնութեան համագործակցութեան նպատակներու մարմին մը կազմելու...

Ի միջի այլոց, ընդունեցան գործակցական (cooperative) ընկերութիւններ կազմելու և իրաւարանական օժանդակութիւն ընձեռելու առաջարկները, համագործակցութեան ընկերութիւնները, համագործակցութեան ընկերութիւնները, ինչպէս նաև պատմական հնութիւններու պահպանման ու մեր ազգային քաղաքակրթական նմուշ մնացորդներու ազատման ու հաւաքման համար ընդունեցան Արթուրի փոփոխութեան և Փանոս Թէրլէմէզեանի կազմած հետեւեալ բանաձևը...

«Կրթական օր, երկու տարւոյ ընթացքին հայրենիքի մէջ եղած ամէն կարգի նշխարներ, ձեռագրիներ, արձանագրութիւններ, տաճարներ, նկարներ և մեր պատմական յիշատակարաններ հետզհետէ կը փճանան, կը թաւառուին, չհասարկութեան նիւթ կը գտնան» Գանձաւորութիւն կառավարիչ...

1. Ընտրելիք ապագայ մարմին լուրջ ուշադրութիւնը հրաւիրել մնացած յիշատակարաններու (վանք, եկեղեցի, կոթող, արձանագրութիւն) պահպանման:

2. Այդ մարմինի միջոցով ժողովը շարժուն յիշատակարանները Լճի մասին թանգարանին պահ ապահովել:

3. Ապագայ համագործակցութեան ընկերութեան կազմելու համար համագործակցութեան գործունէութեան և հասարակ մեր ազգային արժեքները ցուցնող բոլոր մնացորդները, ինչին անձերու թէ ընկերութիւններու քով ցայտմ պահուած, շանտրով այդ ամէնը ի մի հաւաքել:

Երևան 916 մայիս ԽՈՍՐՈՎ ԽՈՐԽՈՐՈՒՆԻ

ՎԻՐԱՌՈՐ ԿՆՃԻՈՒՂ

(Շար. 1 Թուէն եւ վերջ)

«Պատար չէր Ռուսաստանի համար մի քանի բաւարարիչ աւելի զօրք գրկել հայկական ճակատը, մանաւանդ այն հարիւր հազարաւոր հայ երիտասարդներից, որոնք կուտային աւրիտանայի ճակատներում, զժուար չէր հեռացնել հայաստանի զօրավարներին կամ զէթ համաձայնիլ որ կող կասահայերը աճեցնէին կամաւորների թիւը իրենց ուղած ծաւալով, զժուար չէր նայնիակ մի ազգու ըստ պատմաւիք ուղղել կ. Պոլսի պահիճներին, հոչակել իրեն պատանու՝ զը բաւաւած վայրերի թիւրք ժողովուրդը... այն ժամանակ, երբ Ֆրանսիան ազատում էր Ճէպէլ Ռուսայի 5000 ինքնազաւազան հայերին...»

Եւ մենք սպասեցինք կարօտով... բայց մի դաւաճան անսրտութիւն համակել էր կովկասում իշխանութիւններին զէպի հայոց ճակատապիւրը. ոչ միայն նրանք քար ու ապաւած էին Հայաստանի անբար ջարդերի և աւերածի հանդէպ. այլ և զբաւաւած վայրերի մէջ պարզուպէս հովանաւորում էին քիւրդին ու թիւրքին և հարմուած վերագործող հայ փախստականներին. ինչ արտակարգ քնքշալ թիւն գեներալ Իւզենիչի կողմից զէպի այն 20,000 թիւրք ժողովուրդը, որ մնացել էր Էրզրում... Եւ ինչ անուրբ բռնուցք հարութեան մնացորդների զէմ... Չէր իսկ թող տալիս այդ բիրտ ստորապը, որ հայ կազմակերպութիւնները միջոցներ ձեռք առնէին ազատելու այն բազմաթիւ հայահիւսներին, որոնք մը նայել էին դերութեան մէջ նայն էրզրումի թիւրք աներում:

«Թիֆլիսի Ազգային Բիւրօի արշիվներում հարիւրաւոր տօքիւններ կան սուս զինուորական իշխանութիւնների այդ դաւաճան արարքների մասին... Դեհգութեամբ, ամենասակարկութեամբ էր պատասխանում հին սէփիւր Ռուսաստանը հայոց անհաշիւ զոհաբերութիւններին...»

«Եւ այդ է, որ լցրեց յուսալքութեան բաժակը, այդ է, որ յարուցեց մեղադրանքները, անդու ուսնուրք քննադատութեան ժխտը հայ շրջաններում... Մեղադրանք Ազգային Բիւրօի զէմ, Հ. Յ. Գաշնակցութեան զէմ, Ազգային Պատուիրակութեան զէմ, նայնիակ Հայոց կաթողիկոսի զէմ, որ օրհնելով ճամբու էր գրել կամաւորներին:

«Կամաւորական շարժումը — պատճառ ամէն շարեաց:

«Ոչ ոք չէր ուղում փոքր ինչ իսրըրը դեռ պատճառների մէջ... զէթ յիշէր որ 1878ին հայ կամաւորի ստուերը անգամ չկար երբ Զեղաղեղ իրենց արիւնարբու հրտակներով արշաւում էին հայ երկրի մէջ և հարիւրաւոր գիւղեր հրոյ ու սրոյ ճարակ գործնում... զէթ յիշէր որ 1909ին, հայ ըմբոստացման ըստ...

եքը չկար և այնու ամենայնիւ զազանացած իւտմանը, վերից եկած հրահանգով, մորթուում էր տասնեակ հազար հայերին Արաւսում և շրջակայքում... զէթ մի վարկեան մտաբերել, որ «Հայաստանը հայերից մաքրելու» ծրարիւրը նոր լսան չէր, որ նա եղել է հաւատոյ հանդանակը հին և նոր Թիւրքիայի և որ երբէք այդ ծրագիրը իրագործելու պայմանները սինքան նպատակարար չեն եղել ինչպէս այժմ երբ այն չկար թիւրքի հանդէպ արտաքին ճնշումը Եւրոպան, և երբ ամենահաւատարմ հակառակորդը, Ռուսիան, հանդիսանում էր Հայաստանի ազգամահատու սրպէս մի հսկայ անդամալոյժ, անկարող վանից ու Մուշից զէնն անցնելու և նոյնիակ անկարող՝ վանը պահելու շատ թէ քիչ երկար ժամանակով...»

Ո՞վ կարող էր գուշակել մի այդպիսի վախճան. Ո՞վ էր այն հայը, որ պատերազմի սկզբում համարձակու էր մարդարէանաւոր, թէ երեք տարուայ կախնիւրից յետոյ, թիւրքերը տակաւին տէր պիտի լինէին Մուշին ու նայնիակ վասպուրականի մի պատկառելի մասին... Եւ ո՞վ կարող էր այն ժամանակ նախատեսել այսքան ամառուութիւն, այսքան հակահայ սծիրներ սուս զինուորական իշխանութիւնների կողմից...»

Հաւատոյցինք ամբողջ հայութիւնը հաւատաց — սուսական սրարշաւ յառաջիկայութեան, և ամէնքս էլ վրիպեցինք. Սխալը այս կամ այն անհատները չէ, այս կամ այն կուսակցութեանը չէ, սխալը հաւաքական է, ազգովին է. Սխալուցիքը հաւատալով, սխալուցիքինք մեր գուշակութիւնների մէջ, ինչպէս որ սէփուիլ էին ամենազօր պետութիւնների ամենամբարձիւր գիւնաղէաները. Սխալուիլ են շարաշար Անդլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը՝ Գարգանէյի ինդրում, լուղանեան և ուրիշ ինդիւրներում. Սխալուիլ է Գերմանիան իր գիւնաղէաներով, իր սաղմաղէաներով, որոնք չկարողացան նախատեսել՝ ոչ Անդլիայի թաւաւորութեանը, ոչ իտալիայի «դաւաճանութիւնը», չկարողացան մանաւանդ գուշակել, որ մի օր իրենց զէմ պիտի հանեն ամբողջ աիեղիւքը:

Եթէ Գաշնակից պետութիւնները չգործէին մի շարք ճակատագրական սխալները, պատերազմը շատուց աւարտած կը լինէր և զոհերի թիւը անհամեմատ սահմանափակ. Եթէ Գերմանիան չգործէր այնքան ծանր վրիպումներ, եթէ նա գիւնաղէանի հետառու լինել, անտաշակոյս հանգարտ կը կենար և զերծ կը մնար անհույի կորուստներից, որոնք հասցրել են երկրը օրհասի և սպանում են վաղն էլ բերել անարգ պարտութիւն:

«Իսկ եթէ մենք էլ չգործէինք մեր սխալները, եթէ բոլոր հայերս պատերազմի սկզբում լինէինք մի մի Մովսէս մարգարէ, Հաւատոյցինք Ռուսաստանի ուժին, ուէ հրաշքով նախատեսէինք գալիքը, ուէ հրաշքով կարողանայինք խաղաղ խեղդել կամաւորական շարժումը... Ի՞նչ Արգեօք զերծ կը մնայինք աղէտից...»

քով կարողանայինք խաղաղ խեղդել կամաւորական շարժումը... Ի՞նչ Արգեօք զերծ կը մնայինք աղէտից...»

«Ո՞չ, և հազար անգամ ո՞չ. Սխալուց մի հատիկ կամաւորի էլ ջարդն ու աւերածը պիտի կատարուէին վրիժխառի ծաւալով... ջարդաւանդի թըւին պիտի աւելնար գուցէ նաև վասպուրականի հայութիւնը:

«Եւ ի լրումն ամենայնի, Ռուսաստանն էլ, Եանուշկիվիչի ու Իւզենիչի Ռուսաստանը, «գուաճան հայերը» պատմելու համար՝ կրկնապատիկ թոյն պիտի մաղէր իր ամարդի քաղաքականութեան ճանապարհին...»

(Հարկնիք) Միք. ՎՍՏՄՆԻՆՆԻ

ՔԵՐԵՆՍՔԻ ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՍՍԻՆ

Վերջերս Պետրոպոլի մէջ կայացած սուս բանտրական և զինուորական խորհարդի ներկայացուցիչների նիստերին սուս ընկերակաւաններին մէջ խոյր մտաւ որ «Իշխան» (ժայռայգական) կը կոչուին, պահանջեր են ամէն գնով հաշտութիւն կընքել. Այդ պահանջների շարքին ըստ են նաև որ պէտք է սուսական բանակը յետ քաշուի Թիւրքաստաննէն և զայն վերագործնէ Թիւրքերին, Հայաստանի գահիճներին:

Այս անթալ՝ Ռուսիայի վարչապետ և պատերազմական ու ծախային նախարար Գէրէնսոփի ու այժմ բարոս սուս կուսակցութիւնների հաւանութիւնը կը վայելէ, պատասխանելով այդ ժայռայգականներին, յարտարարած է հետեւեալը.

«Մենք չենք կրնար Հայաստանը պարզել, որովհետև այն սամանակ Հայաստանէն ոչինչ չմնար. նա կը կորսուի Գիւրգերէն և Թիւրքերէն կատրուելով»:

ԿՈՎԿԱՍՍ ԱՊՈՍՏՈՒՆՈՒ ՓՈՒՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՒՐԸ

Փախստականների խնամատարութեան համար կազմուած միջազգային մարմինի վերջին նստին մէջ հազորդուեր է որ մինչև 1917 մարտ 1 (Հ. Տ.) ամբողջ կովկասեան երկրամասին վրայ գտնուող փախստականների թիւն է. Հայեր 283.093, Ասորիներ 4.000, միւլիթմաններ 44.000

ՆՍՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԵՆ

(Շար. 1 Թուէն եւ վերջ)

Հետեւեալ ամէն կիրակի օրերում ևս, նայնպէս իր ազգուս և սրտաշարժ քարոզներով յարգարում էր հայրենիքից կորուած ու այս հետաւոր և սուար երկրում տարալրում փոքրութիւ համայնքին՝ սիրելի հայ ազգը, սիրելի հայրենիքը և հուսով ու սրտով փարել ընդ հանուր հայութեան այն վսեմ իտելալին ու մաքուր սկզբը...

բուն յնհրին, որով գարեբից ի վեր ան-  
չեղ կերպով պահել է իր ազգային  
գոյութիւնն ու յարատեւութիւնը:

Բայց ախտն, որ նրա այդ գրա-  
ւիչ ու ազգագրա խօսքերն անհատ-  
կանաբար են մնում հասարակութեան  
մեծ մասին, որովհետեւ, ինչպէս ա.  
նախնորում եւ յայտնել ենք այս մեծ  
գոյութեան խնամքը, տեղւոյն նոր սե-  
րունդն իր մարտնչի լեզուն մտաց-  
ման առաջ պատճառով չէ կարող  
խօսել և գրել կարգալ հայերէն, չի  
հասկանում հայերէն: Հետևաբար նրա  
քարոզներն ժամանակ միշտ էլ մեր  
աչքի առաջ էին գալիս յս. Արաբեա-  
նի այն անգին տողեր, թէ — «Ախր  
որ ազգը իր լեզուով չի՛ խօսում, իր  
լեզուն չի՛ հասկանում, բերանիցը էլ  
ուսկի վեր անձի՛ր, ու՛մ պէտք է տեսնա՛լ»:

Սրբազան հայրը, իր այստեղ եղած  
կարծ ժամանակամիջոցում, քանի  
քանի անգամներ, թէ՛ եկեղեցու բե-  
մից և թէ՛ տաճարին մոտիկներում ու  
աներում արխնատ արտով բացատրեց  
ժողովրդին այն սուկալի լափող հո-  
տանքը, որի հեղեղներն ու ալիքներն  
մէջ օրէ ցօր կուլ են գնում և խեղ-  
զում ու անյայտանում են հնդկա-  
հայ համայնքի նոր սյուրբը:

Այս, որ արա՛խ ենք, որ սրբազան հայ-  
րը, ազգիս վեհափառ հայրագետի  
ներկայացուցիչն, անձամբ տեսաւ  
այն մեծ վիճը, այն սուկալի կորստ-  
եան անգունը, որի առաջ կանգնած  
է Հնդկաստանի հայութեան նոր սե-  
րունդը և անյետաձգելիօրէն մի զօ-  
րեղ ձեռք է պէտք լեա կանցնելու  
և փրկելու նրան անհետացման չե-  
մից: և այդ զօրեղ ու հաստատուն  
ձեռքը լինելու է Ամենայն Հայոց  
Սրբազանագոյն կաթողիկոսի կամ նոր-  
ջուղայի Ամենափրկչեան վանքի կող-  
մից ուղարկուած մի կրթում, կա-  
րող ու գործունեայ փոխանորդ, որը  
պարտաւոր լինի անընդհատ շրջել ու  
այցելել Հնդկաստանի ամէն մի քա-  
ղաք, ջուրայի կղզիները և մինչև  
անգամ Հոնկոնգի իսակ անկիւննե-  
րը (որտեղ որ հայեր կան) ու անձ-  
նախարար աշխատել, քարոզել և  
յորդորել բանալ դպրոցներ (որտեղ  
որ կարիքը մեծ է), սղեւորել գէպի  
հայ եկեղեցիներ, վերականգնել հայ  
զրականութիւնը: մի խօսքով՝ հայ-  
կական ողի ներշնչել նրանց որտեւ  
և մեծ զարկ տալ հնդկահայոց ազգա-  
յին վերածնութեան ու ինքնագի-  
տակցութեան գործին և սերտ կապով  
կապակցել միմեանց ու ընդհանուր  
հայութեան հետ (1)

Այս, նորից կրկնում ենք, որ  
միմայն այդ է այն անյետաձգելի  
ու փրկարար միջոցը, որով կարելի  
կ'լինի մեր հնդկահայ նոր սերունդի  
յարտաւելութիւնը գէթ որոշ չափով  
ապահովել: և թէ ոչ՛ մի քանի տա-  
նեակ տարիներէ յետոյ, այնպիսի

մի ցաւալի հետեանք է առաջ գալու  
և այնքան կը սուսենք, որ զրա  
մասին խօսելը մեր կարողութիւնից  
չտա վեր ենք համարում...

Յուսալի է որ սրբազան հօր այդ-  
ազգաչէն ջանքն ու յորդորը այս ան-  
գամ տեղ կը գանէ մեր հնդկահայ  
համայնքի որտեւ ու չի մնալ սրպէս  
ձայն բարբառոյ յանապատի, և ըս-  
տին ևս միախորհուրդ և հեռաաես  
կերպով կ'աշխատեն, որքան կարելի  
է՛ շուտով, այդ մեծ ու կարեւոր գոր-  
ծը զլուխ բերելու՝ ի սէր մեր բազ-  
մատանջ հայ ազգի, ի սէր մեր տա-  
նապետ հայրենիքի և ի սէր մեր  
ազգայնայ յայը կազմող մատաղ նոր  
սերունդի:

Չմտանանք յիշել նաև այս, որ  
սրբազան հօր գնահատելի աշխա-  
տութիւններից մին ևս այն եղաւ, որ  
ինչպէն Հնդկաստանի ուրիշ հայ դա-  
րակների մէջ, տեղս էլ նոյնպէս, կա-  
րողացաւ կազմակերպել «Հայոց  
Բարեգործական Ընդհանուր Միու-  
թեան» մասնաճիւղ և մեր փոքրա-  
թիւ համայնքին ևս միացնել ամբողջ  
աշխարհի անկիւններում տարածուած  
այն հայութեան հետ, որոնք այդ  
Միութեան պանծալի զրօշին տակ  
համախմբուած՝ անձնախրարար գոր-  
ծում ու աշխատում են յօգուտ մեր  
գոյակալ հայ ազգին և մեր բազմա-  
հարաւ հայրենիքին:

Ուղիղ Չ ափս այստեղ մնալուց և  
ազգի ու հայրենիքի վերածնութեան  
նախնական գործի օգտին ձեռնար-  
կած հանդանակութիւնը 20,000ի  
հասցնելուց յետոյ, անցաւ Մինկա-  
փուս ու Ջաւա՝ իր միսին շարու-  
նակելու:

Կրկին և կրկին յաջողութիւն ենք  
մաղթում այդ համազգային վսեմ ու  
սուրբ գործին:

Մ. ԳԱՍՊՍՏԵԱՆ

### Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ինչպէս ծանուցած ենք արդէն  
Արմէնիայի 32րդ տարեշրջանի 48րդ  
և 49րդ թիւերին մէջ, Ֆրանսա Բը-  
նակող օտարականները, կառավա-  
րութեան նոր օրէնքին համաձայն,  
պարտաւոր են երթալ նահանգապե-  
տարանը և նորոգել տալ իրենց բը-  
նակութեան արտօնագիրը:

Այժմ պաշտօնական ազգիւրներէ  
մեղ կը հազարդեն որ այն օտարա-  
կաններ որոնք որոշեալ ժամանակա-  
միջոցին մէջ կը թերանան հնազան-  
դի այդ կարգապարտութեան, խիստ  
պատիժների պիտի ենթարկուին և  
ուղարկուին camp de concentration:  
Ուստի փափաքելի է որ բոլոր Հա-  
յերը, այդ թէ կին, փութան որոշ-  
եալ օրերին մէջ նահանգապետարան  
երթալ և կարգապարտ տալ այդ խըն-  
դիր որ այնքան մեծ զոհողութիւն  
չպահանջեր. այսպէս անսնք խուսա-  
փած կը լինին ազգայ անախորժ  
զէպքերէ որոնք երբէք պատուարեր

չեն կարող լինել հայ անունին և ոչ  
երբէք օգտակար՝ իրենց՝ հայ ան-  
հատներին:

Թիւրքահայաստանի հայերի կանո-  
նաւորակ արձանագրութեան գոր-  
ծը զիւրացնելու համար, ֆրանսական  
կառավարութիւնը այդ գործին յա-  
կացուած ֆրանսացի պաշտօնատար-  
ներին շարքին մէջ աւելցուցած է նաև  
Հայ մը, Տիար Վարդան Վահանին,  
Սիբաստիանի ֆրանսական հիւպատ-  
տարանի նախկին թարգման և այժմ  
Մարսէյի քաղաքապետական իշխա-  
նութեան ճանչցուած թարգմանիչ և  
երկուեալ թարգման հայերէն և  
թիւրքերէն լեզուների (traducteur et  
interprète juré des langues arménienne  
et turque): Ֆրանսական լեզուին ան-  
տեղեակ եղողները արձանագրուելու  
համար կրնան գիտիլ այդ հայ պաշ-  
տօնեային, նահանգապետարանին մէջ  
(hôtel de la Préfecture):

### ՍՄԵՐԻԿՍՅԻ ԿԱՍՄԱՌԻՆԵՐ ՍԱՆՆԵՆԻ ԸՍՄՍՐ

Սպանիկէն կիմացմն որ ամերիկացի  
կամաւորների երկու ջոկատ հասեր են  
Սպանիկ, մակեդոնական ազգաբնակա-  
ւոյն վրայ կուռելու համար: Այդ կամա-  
ւորներ մեծ մասով ուսանողներ են եւ  
ամերիկացի հարուստ ընտանիքների զա-  
ւակներ:

### ՃՍՓՈՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՍՏԵՍԱՆ ԵՍՋԱՆԳՆԵՐ

Հուսկէ գրած են Resto del Carlinoյն.  
«Երբայն, պատերազմի միջոցեպնե-  
րով սատակ գրողուած, գուցէ շատ ուշա-  
գրութիւն չգարծուց այս եղելութեան որ  
սակայն կարեւոր նշանակութիւն մը ունի.  
Ճափոնի կողմէն պատուիրակութիւն մը  
գրկուած է Ամերիկայի Միացեալ-Նահանգ-  
ները: Այս առթով պէտք է յիշել որ Մի-  
ացեալ-Նահանգները Չինաստանի անկար-  
գութիւնների առաջն առնելու նպատակով  
պետութիւնների հաստեական գործակցու-  
թիւն մը առաջարկած էր յունիս 4ինս Ա-  
մերիկայի այդ նախաձեռնութիւնը մի տե-  
սակ անհանգստութիւն յառաջ բերաւ ճա-  
փոնի մէջ: Կերմանիայի կողմից, ճար-  
պիկութեամբ իրենց աշակից օժնետուով  
ամերիկեան—գերման լրագրիները, ջանա-  
ցին իւր թափել կրակին վրայ, բայց ի  
զօր, որովհետեւ թիւրքապարտները  
փարատուած են այժմ: Ահա ճիշդ ստոր  
համար է որ ճափոնէն մասնաւոր պատ-  
ւիրակութեան մը Վաշինգտոն գրկուելը  
ուշագրութեան արժանի նշանակութիւն մը  
կը ստանայ:

Խնդիրը Միացեալ-Նահանգների և ճա-  
փոնի միջև տեսական համաձայնութեան մը՝  
հիմերը գնելու վրայ է և հաստեական  
է որ Անգլիան ալ մասնակցի: Մոյրագոյն-  
Արեւելքի և խաղաղականի ահագին խնդիրն  
է որ կը ներկայացուի ճիշդ համաշխար-  
հային պատերազմի միջոցին: 1914 ապրի-  
լէն ի վեր Գերմանիան փորձեր կ'ընէ զաշ-  
խակցութիւն կազմելու ճափոնի հետ որ  
սակայն կը մերժէ: Անգլիա, Ամերիկա և  
ճափոն իրենց մէջ համաձայնութիւն մը  
գոյացնելով այժմ, պիտի արտաքրեն Կեր-  
մանիան իրենց գործունէութեան ընդար-  
ձակ գաշակէն:

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

Գահընկեց թագաւոր կոստանդիա,  
նախ լուծած Երեսօթիստական ժո-  
ղովը յը. 25ին գումարաւորով, վար-  
չապետ Վէնիզէլու կարգադրած էր  
ժողովի վերաբացման համար Ալեք-  
սանդր թագաւորի հրամանագիրը:  
Այդ պարզ գործողութիւնը ստանց  
մէջ միջոցէպի կատարուելէ յետոյ,  
յաջորդ նախ մը թողուած էր զի-  
ւանի ընտրութիւնը:

Օղոստոս 4ին, արդէն ժողովին զի-  
ւանը ընտրուած լինելով, Ալեքսանդր  
թագաւորը ներկայացաւ ժողովին  
ուր Սահմանադրութեան հաստա-  
րիմ մնալու երգման արարողութիւնը  
կատարելէ յետոյ կարգաց իր գա-  
հաճառը Անար մէջ յարգանք կըն-  
ծայէր այն ծառայութիւններին որ  
համաձայնութեան տէրութիւնները  
մատուցին Բաւնաստանին և կրեւր թէ  
փոքրիկ ֆունաստանի երախտագի-  
տութեան զգացումն ու շահերը կը  
պահանջեն համաձայնութեան հետ  
քաղել ինչպէս որ փարիզի խորհրդա-  
ժողովին մէջ ալ հաստատուած է  
արդ: Կոչ կընէր յոյն ժողովրդին և  
Երեսօթիստականութեան, աջակցել կա-  
ռավարութեան այս ծրագրով ընելիք  
ջանքերին:

— Զանազան կազմերէ ֆոյներ կը  
չարունակեն գրական մեծաքանակ  
նպաստներ զրկել վէնիզէլուի կառա-  
վարութեան:

— Յոյն մամուլը կրակուրոց կար-  
ձակէ այժմ Գերմանիայի դէմ սրի ա-  
ջակցութեամբ, կրահն, 300.000 Յոյն  
պաննուած են Թիւրքիայի մէջ և  
40.000 ալ Պուլղարներին ձեռքով  
արեւելեան Մակեդոնիայի մէջ:

### ՌՌՌՍՍ

Վարչապետ Բէրէնսքի յուսահա-  
տելով ժայռայեղների խաղախրական  
պատրուակի տակ խուճայոյղ և բա-  
րոյալքէջ վարմունքէն, հրաժարական  
ստաւա Բէրէնսքի կը պահանջէ որ  
կառավարութիւնը որ պատասխանա-  
տու է գործերի ընթացքին համար,  
անկախ լինի կուսակցական կազմա-  
կերպութիւններէն որոնք անպա-  
տասխանատու մարմիններ են և կու-  
զին իրենք դարձնել կառավարու-  
թեան զեկը: Բոլոր կուսակցութիւն-  
ների գլխաւորները խորհրդատուով  
մը ունեցան օգոստոս 4ի զիշերը և  
այդ պատուական նստի մէջ երկար  
խորհրդակցութեան յետոյ ընդարձակ  
իրաւունքներ տուին Բէրէնսքիին,  
իր յարմար տեսած անձերէ և զա-  
նազան կուսակցութիւններէ նոր վար-  
չութիւն մը կազմելով պաշտօնը շա-  
րունակելու համար: Բէրէնսքին ըն-  
գունեց:

(1) Տես 1914 թուականի «Մշակ»-ի N.  
144ի մէջ ապագրուած «Հնդկաստանում  
փոխանորդութիւն հաստատելու անհրաժեշ-  
տութիւնը» վերնագրով մեր յօդուածը:

ՊՍԵՐԱՉՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսացիները այժմ բաւական չեն համարիր միայն իրենց ունեցած գիրքերը պաշտպանել Գերմանների յարձակումներին դէմ. այլ մի քանի շաբաթներէ ի վեր յարձակողական պատրաստութիւններ տեսած էին Ֆրանսորդի մէջ, Քրանսակէլական սահմաններին մաս վերջերս ուժգին և երկարատե թնդանթաձգութիւնը իրրև յարձակման նախանշան մը համարելով թշնամին, անհանգստութեամբ կը սպասէր արդէն յարձակման, ինք ևս իր պատրաստութիւններ տեսնելով:

Յուլիս 31ի առաւօտ, չնայելով օդին անձրևոտ և աննպաստ լինելուն, Ֆրանսացիները սկսան իրենց յարձակողականը այնպէս քաջաբար և ուժգին թափով որ նախապէս սորոշւած կէտերէն աւելի անդին անցան: Իրենց հետ մէկտեղ կը գործէին Անգլիացիներն ալ իզէրէն մինչև Լիս. Ֆրանսացիները ձախ կողմը կը գտնուէին, Անգլիացիները կեղրոնը և աջակողմը, Գրէթէ 25 հազարա մէկը երկարութեամբ և 1.500էն 3000 մէկը խորութեամբ ճակատի մը վըրայ յիտ մղուեցան Գերմանները իրենց գիրքերէ: Տասի չափ գիւղեր որոնք հզօրապէս կազմակերպուած էին, սաստիկ ամրացած յեճակէտներ, ազարակներ որոնք փոխուած ամբողջներ դարձած էին, անցան Ֆրանսացիների ձեռքը: Գերմանների գիւղերով ծածկուած էին թէ՛ կըռտի դաշտը և թէ՛ իրենց սառլին խրամատները: այդ ապացոյց մ'է թէ մեծ բազմութեամբ կը դիմադրէին և հրաման ստացած էին մինչև վերջին շունչը մեռնիլ և գերի չիմուլ:

Այսու ամենայնիւ 6.122 Գերմաններ գերի ինկած են զաշնակիցների ձեռքը յուլիս 31ին. անոնցմէ 132ը սպայ են:

Հետեւեալ օր, օգոստոս 1ին, կուիւր շարունակուեցաւ: Չնայելով որ ամբողջ օրը հեղեղանման անձրև կուգար և Գերմանները կատաղի հակա-յարձակումներ կընէին, դաշնակիցները յաջողեցան ամրացնել իրենց դրամած նոր գիրքերը և մի քանի տեղեր ալ նոր յառաջացումներ ունեցան, թէև սաստիկ ցեխը խոչընդոտ կը լինէր և ուժբարձակութիւններէն պոյացած անթիւ ծակուծուկերն որոնք լիճեց զարձած էին, անանցանելի կընէին գետիներ:

Ռուսերը կը շարունակեն իրենց նահանջը կալիքիտի մէջ: Չէրնովիցն ալ ստին Աստրիգիբանները և եթէ այսպէս շարունակուի, Պոլսովին ալ շուտով ձեռքէ կը հանեն Ռուսերը: Նշանակիլի է որ տեղ տեղ յաջող գիւղերով թիւններ և զիւցաղուութիւններ դորձած են սուս զօրքերը:

բայց խաղաղասէրների տարածած անտեղի գաղափարները այնպիսի բարոյալքում և անկարգապահութիւններ յառաջ բերած են սուս զօրքերին մէջ որ նախկին ընդհանուր թափը կորուսած է իր ոյժը:

Արեւելեան (Սարմիկի) զօրաբանակէն եկած լուրերը միջին գործունէութիւն մը ցոյց կուտան: Անգլիացի սաւառնորդներ կէվկէլիի և Տէմիր Հիսարի գօտիին մէջ ուժակոծութիւններ բրած են թշնամի գինուրական հաստատութիւններին վրայ: Ֆրանսացիներն ալ Մոնասթըրի և Կորիցիի հիւսիսակողմերին վրայ:

ՆՈՐ ՍՏՍՑՈՒՄԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

L'ARMÉNIE et la Question arménienne par Mikaël Varandian, avec une préface de Victor Bérard. Laval. Imprimerie Moderne. G. Kavanagh & Cie.

(Pro Armenia) եւ Հօրիգոնի նախկին խմբագիրը Տ. Միք. Վարանդեան, որ հայ ազգային կեանքին եւ ընդհանուր ընկերաբանական ինտիլիցենցի վերաբերեալ իր հայերէն եւ ֆրանսերէն գիրքերով եւս ծանօթ է արդէն, իր այս նոր գրքի մէջ ամփոփ կերպով եւ միանգամայն հետաքրքրաշարժ ու գրաւիչ ոճով մը ներկայացուցած է Հայաստանի աշխարհագրութիւնը եւ պատմութիւնը, հայ գրականութիւնը, հայ ցեղին գովելի յատկութիւնները, ազատագրական շարժումները, յեղափոխական կուսակցութիւնները, Հայերի կացութիւնը Ռուսիայի եւ Թիւրքիայի մէջ, կամաւորական շարժումը կողմաւոր մէջ, Թիւրքերի եւ Գերմանների բռնած դիրքը Հայ ազգին հանդէպ, Հայերի սոսկալի վիճակը եւ տոկոսութիւնը, իրենց իրօճը եւ յոյսերը ապագայ Հայաստանի համար եւ այլն: Գրուած այնպիսի հմտութեամբ որ յայտնի կերպով մէջ Հայկական խնդիրը եւ ժամանակակից հայ պատմութիւնը խոր կերպով ուսումնասիրած վարպետի մը գրչէն ելած է այս ոգեւորիչ տաք շունչ մը սփռող գիրքը, որը պէտք է լայնօրէն տարածել Ֆրանսագէտներին մէջ, իրենց ծանօթացնելու համար Հայերի իսկական վիճակը, արժանիքը եւ ինքնավար Հայաստանի համար տածած յոյսերը:

Արեւելեան գործերին ըստ հմուտ եւ ֆրանսացի ծանօթ գրող Տ. Վիգոր Պէրար, որ այս գիրքին յառաջաբան մը գրած է, Հայաստանի ազատութեան մասին Հայերի համերաշխ գործակցութիւնը ցոյց տալու համար հետեւեալ տողերը գրած է իր յառաջաբանի սկիզբը:

«Այս գիրքը գրած է Հայ մը որի կեանքը անդուլ անդադար կուի մը եղած է իր պատկանած ժողովուրդի քաղաքական եւ ընկերական ազատութեան համար: Գիրքը հրատարակուած է Հայ Ազգային Պատուիրակութեան անցակցութեամբ որ հինգ տարիներէ ի վեր ներկայացուցիչն է Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ Արեւելեան Հայոց հոգեւոր գլուխին, Էջմիածնի Տայրազոյն պատրիարքին (կամող իկոս), որը հին եւ նոր երկու աշխարհի բոլոր Հայերը, առանց դաւանաբանական եւ կուսակցական խտրութեան, իրենց ազգային մտածման արտայայտիչը եւ ազգային աւանդութիւնների պաշտպանը կը համարին: Գիրքին հեղինակը համոզուած ընկերակրական մ'է: Պատուիրակութիւնը (որի գլուխն է Ն. Վ. Պօղոս փաշա Նուպար)

ազատական համոզումներ ունի. Պատրիարքը Քրիստոսի քանանայ մ'է, եկեղեցականութեան գլխաւոր մը. ամէնքն ալ Հայեր են որ իրենց կեանքը միասին կը նուիրեն ազատելու օսմանեան երկրի Հայերը ուր հայ ցեղը եւ հայ լեզուն, բոլոր կուտրածներէ յետոյ, անմահ կը մնան դարձեալ:»

Jean AICARD de l'Académie française. ARMÉNIE. La plainte arménienne. Venise. St. Lazare. 1917:

(Ֆրանսական Ակադէմիի անդամ Յ. Ժան Աքարի արտաուոչ բանաստեղծութիւնը Հայաստանի վրայ, որ Բազմաձեպի յունիս-յուլիսի միացեալ թուլին մէջ հրատարակուած էր Տ. Ա. Չօպանեանի հայերէն թարգմանութեամբ մէկտեղ, այժմ աւանձին գրքայով մը լոյս տեսած է գեղեցիկ տպագրութեամբ եւ ժամէքարի կենդանագրով: Գրքային վերջը կայ նաեւ Տ. Ժան Աքարի մէկ ուրիշ բանաստեղծութիւնը, La plainte arménienne, որ ինչպէս ինք կըսէ, «Հայ բանաստեղծ Հ. Ա. Երեմեանի Vèpres arméniennes եւ Nos Morts գրքայիններին մէջ խիստ ազգու կերպով արտայայտուած տողերին ֆրանսերէն մէկ ընդարձակ բացատրութիւնն է»:

Etienne Brasil. — Compendio de Philosophia. Logica, psychologia, historia da philosophia. Rio de Janeiro. Leite Ribeiro & Maurillo, Editores. 1917.

(Պրագիլի համրապետութեան մայրաքաղաքին, Բիո տը Էմանէթի ֆրանսական լիսէի եւ Ամերիկեան գիմնասիոնի դասախօսներէն բրօքէտօր Էթիէն Բրազիլի, որ հայ ծագումէ է եւ իր ուսում աւած է Փարիզի մէջ, մէկ նոր երկասիրութիւնն է այս փիլիսոփայութեան Գ.Ա.Ա.Գ.Ի.Քը. կը խօսի Տրամաբանութեան եւ Հոգեբանութեան վրայ եւ տեղեկութիւններ կուտայ փիլիսոփայական գիմնասիոնի վարդապետութիւնների եւ հին ու նոր փիլիսոփայների վրայ: Բրօքէտօր Պրագիլի ոչ միայն իր հայ ազգին ինպաստ գործունէութեամբ յարգելի անձնաւորութիւն մ'է, այլ եւ իբրեւ գիտութիւնների բրօքէտօր նշանաւոր հմտագետ է Բիո տը Էմանէթի մէջ երկասիրած գիտական բազմաթիւ գիրքերով եւ դասագիրքերով որոնք մեծ գիմնաստութեան արժանացած են գիմնական անձնաւորութիւնների կողմէն):

Բ.Ա.Մ.Ս.Վ.Է.Պ պատկերազարդ ամսագրութիւնը, չնայելով արդի աննպաստ հանգամանքներին, կը շարունակէ դարձեալ կամոնաւորապէս լոյս տեսնել իր ժամանակին: Այս ամսի սկիզբը ստացած ենք օգտաւորի Թիւր, որ կը պարունակէ, իմբազըրական տեսութեան մը յետոյ, Վլսեմ. Տիգրանի Խան Բէյէկեանի եւ գնդապետ Գ. Մ. Գրեգորեանի կենսանագրութիւնները իրենց կենդանագիրքերով մէկտեղ, հետաքրքրաշարժ գիտական եւ բանասիրական յօդուածներ, բանաստեղծութիւններ, ազգային քրոնիկ, նոր հրատարակութիւնների ցանկ եւ այլն: Գիտական բաժնի սովորականին համեմատ զարդարուած է բացատրական նկարներով:

Այս պատուական ամսագրութիւնը, որ աւաջիկայ տարին 75ը տարեշրջանը մտնելով իր ազամանդեայ յոբելեանը տեսելու կարծանանայ եմէ հանգամանքները թոյլատրեն, անարեւան բաժնորդագիրն է այժմ 15 ֆր.: Հասցէն Rédaction de la revue «Pazmaveh», Ile de St.-Lazare Venise (Italie):

ԵՄԼՆՈՒՑՈՒՄՆԵՐ  
EAU DE COLOGNE  
Aux parfums d'Arménie  
préparée par le Dr. H. -Léon  
Արդուզարդի այս հեղուկ բազալքութիւնը անհրաժեշտ է ամէն տունի:  
Ունենալու համար դիմել Տըլ. Լեոն Համբարձումեանին, 16, bld. Saint-Denis. Paris: Գին. շիշ 8 ֆր., կէսը 4 ֆր.

ԾՍԽՈՒ ԳԻՐՔԵՐ  
Ար. Ա. Ար. իւրազարտան մէջ ծախկը գտնուին, ի միջի այլոց, և հեռակէ գիրքերը, որոնց արժէքները նշանակուած են իրենց առջև:  
Մարտէլէն դուրս զրկելու ճանապարհածախքը զնորին վրայ է. ուստի հայ շի զիւրութեան համար կը նշանակենք թ Մարտէլի մէջ ծախուելու գիները և փոստով ուրիշ քաղաք զրկուելու գիները (Այս վերջինները փակագծի մէջ գրուած են): Արժէքը կանխիկ շտապած գիրք շրկուելի: Արձանագրուած (commandé-registered) ծրարով ստանաւորողները պէտք է 25 անդիմ աւելի զը կեն իւրաքանչիւր ծրարի համար որ 2 ֆր թէն աւելի պէտք չէ կուէ:

Հ. Ս. Երեմեան. — Գեղ. Ե. Յ. Ե. Կ. (Գրական պատմութիւն). 1915:

(Հայ գրական պատմութիւնը այս ընդարձակ գործին մէջ ուսումնասիրուած է գեղարուեստական տեսակէտով: Արժեքը ընտանադատական գիրք մը առաջ անգամն է որ լոյս կը տեսնէ մեր մէջ):

Հռչակաւոր Գեղեցիկների հիմնադրութեան արտադրանքն այս նոր գործը գրականութեան է նաեւ իր գեղատեսիլ նկարներով, բազմաթիւ կենդանագիրքերով և գիմնական գեղարուեստական հրաշք իքն իր ընդօրինակութիւններով որոնցմէ ում ոչ միայն իրենց գեղեցիկութեան հրապարակով կը զմայլեցունեն, այլ եւ հայրենաշուն յիշատակներ արձնցունելով կող եւ որին Գեղեցիկը գեղեցիկ է արդարեւ: Այս մէջ գրչին ու վրձնիւր միատեղ աշխատանքն միտքը կը թելու, ընտանադատական ոգի արձնցնելու եւ գեղարուեստական ճշակը զարգացնելու: Հ. Ս. Երեմեան ընտանադատութիւններով մասամբ կատարած է հայ գրական պատմութեան նկատմամբ եւ այն ինչ որ իբօլ իլ Գէն (Hippolyte Taine) անգլիական գրականութեան պատմութեան նկատմամբ:

Գեղեցիկը, հարիւրաւոր գեղատեսի պատկերներով զարդարուած, որոնցմէ շատեր աւանձին թղթերի վրայ տպուած են մի քանիսն գունագեղ են, կրնայ նաեւ հետաքրքրաշարժ եւ հրապուրիչ գեղեցիկ զարդ մը հանդիսանալ հայ տունների նկարասիների սեղանին վրայ:  
Չնայելով գրքին ստուարութեան եւ նրբագիծ բազմաթիւ նկարներին որոնք հրատարակութեան ծախքերը կը շատցունեն, նշանակուած է թեթեւ գին մը Ս. Ժ. Ե. Կ. 7 ֆր. (8 ֆր.):

Գործնական Քերականութիւն Ֆրանսերէն լեզուի Անի ոճով. 7րդ սպգր. յո լեռուածներով. 1910: Ա. մաս 1 ֆր. և 2 (ձեպքիւրով. 1 ֆր. և 70 սնգմ.):

Նոյն ի մաս 1 ֆր. և 40 սնգմ. (ձ. 1 ֆր. և 5) սնգմ.):

ՏՆՕՒԷ — ՊԵՐՏԵՐ  
Մ ՓՈ ՓՈՒՅԱԼ ԵԱՆ  
Մ Ա Ր ՈՒ Ե Վ

Հայերէն Տպարան Մ. Փոքրօգտեան  
Le Gérant: François CARRIERE.  
Marseille. — Imprimerie du Midi